

«ՄՈՒՍԱԼԵՌ» ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԹԵՎ



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՄՈՒՍԱԼԵՌ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ»

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԿ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

I Միություն

1. Միությունը կոչվում է «Մուսալեռ Հայրենակցական Միության Երիտասարդական թև» (այսուհետ՝ Միություն): Այն վայելում է «Մուսալեռ հայրենակցական միության» բարոյական հովանավորությունը:
2. «Մուսալեռ» Հայրենակցական Միության Երիտասարդական թևի նպատակն է.
 - Միավորել մուսալեռցի ծագում ունեցող երիտասարդներին:
 - Պահպանել մուսալեռան ավանդույթները, բարբառը, արժեքները և սովորույթները:
 - Կապ հաստատել աշխարհասփյուռ մուսալեռցիների հետ և ցանկազրել նրանց:
 - Օգնել և աջակցել ընդունակ երիտասարդներին՝ իրականացնելու իրենց նպատակները (ուսում, սպորտ, արվեստ և այլն):

II Անդամակցություն

3. Միությանը կարող են անդամագրվել առանց սեռային խտրականության 15-30 տարեկան բոլոր այն անձինք, ովքեր.
 - արմատներով մուսալեռցի են (հայր, մայր, մեծ հայր, մեծ մայր):
 - կընդունեն և կառաջնորդվեն սույն կանոնադրությամբ:
 - կկատարեն իրենց վստահված պարտականությունները:
 - կվճարեն միության կողմից սահմանված տարեկան անդամավճարը:
4. 30 տարին բոլորած անդամը կարող է մնալ միությանը օժանդակ անդամ՝ առանց ընտրելու և ընտրվելու իրավունքի:
5. Անդամագրվողը պետք է միության կողմից ունենա 2 երաշխավոր:
6. Անդամակցության համար չկա որևէ գաղափարական և կրոնական խտրականություն, և որևէ քաղաքական գաղափարախոսություն չպետք է շահարկվի միության ներսում:
7. Անդամակցությունից կարող են զրկվել բոլոր այն անձինք, ովքեր.
 - կխախտեն միության կանոնադրությունը:
 - Կդրսևորեն անպատշաճ պահվածք:
 - Կխաթարեն միության գործունեությունը:

III Ընդհանուր ժողով

8. «Մուսալեռ» հայրենակցական միության երիտասարդական թևի ընդհանուր ժողովը հանդիսանում է միության գերագույն ժողովը, որը հրավիրվում է վարչության կողմից տարին մեկ անգամ՝ մայիս ամսին:
9. Ընդհանուր ժողովն ընտրում է վարչության նոր կազմ:
10. Ընդհանուր ժողովն իրավունք ունի ընդունել միությանը վերաբերող ցանկացած որոշում:
11. Ընդհանուր ժողովն է քննարկում և գնահատում (թերի, բավարար, լավ, գերազանց) ընթացավարտ վարչության բարոյական և ֆինանսական գործունեության հաշվետվությունը:
12. Ընդհանուր ժողովն է ընտրում քարտուղարին և նախագահին, որոնք վարում են տվյալ ժողովը:
13. Ընդհանուր ժողովի նախագահն ու քարտուղարը չեն կարող միաժամանակ հանդիսանալ ընթացավարտ վարչության անդամ:
14. Կանոնադրության մեջ ցանկացած փոփոխություն կատարելու համար վարչությունը պետք է քվեարկությունից 6 ամիս առաջ գրավոր կամ ընդհանուր ժողովի միջոցով տեղյակ պահի միության անդամներին այդ մասին:
15. Կանոնադրության մեջ ցանկացած փոփոխություն հաստատվում է ժողովի անդամների առնվազն 2/3 համաձայնությամբ:
16. Միութենական ցանկացած ընտրություն՝ բացի կանոնադրային ընտրություններից, կատարվում է 50%+1 ձայների մեծամասնությամբ:
17. Ձեռնպահները դուրս են մնում քվեարկողների ընդհանուր թվաքանակից:
18. Ընդհանուր ժողովն ընտրում է 3 հոգուց բաղկացած հանձնաժողով՝ քննելու համար վարչության ներկայացրած նախորդ մեկ տարվա հաշվետվությունը:
19. Ընդհանուր ժողովի որոշումները չեղյալ հայտարարելու համար անհրաժեշտ է քվեարկողների առնվազն 2/3-ի համաձայնությունը:
20. Միության անդամները կարող են պահանջել արտահերթ ժողով միության անդամների առնվազն 2/3-ի ստորագրությամբ:
21. Ընդհանուր ժողովի կողմից վավերացված նյութաբարոյական տեղեկագրի մեկ օրինակ կփոխանցի «Մուսալեռ հայրենակցական միությանը»՝ որպես տեղեկատվություն:

IV Խորհրդատու

22. Միությունն ունենում է մեկ խորհրդատու՝ ծագումով մուսալեռացի:
23. Խորհրդատուն ընտրվում է ընդհանուր ժողովի կողմից մեկ տարի ժամկետով:
24. Խորհրդատուն կարող է ընտրվել միայն երկու տարի անընդմեջ: Մեկ տարի դադարից հետո նա կարող է վերընտրվել:
25. Խորհրդատու կարող է ընտրվել 30 տարին բոլորած ցանկացած անձ՝ առանց սեռային խտրականության:
26. Խորհրդատուն կարող է մասնակցել բոլոր ժողովներին իր ուղղիչ խորհուրդներով և առաջարկներով:
27. Խորհրդատուն ժողովների ընթացքում քվեի իրավունք չունի:
28. Խորհրդատուն պետք է տեղեկացվի ժողովների ընթացքում քննարկված բոլոր հարցերի ու որոշումների մասին:
29. Խորհրդատուն իրավասու չէ միության անունից որևէ որոշում կայացնելու:
30. Խորհրդատուն հանդիսանում է «Մուսալեռ հայրենակցական միությանը» կապող օղակ:

V Վարչություն

31. Միության տարեկան ժողովների միջև ընկած ժամանակահատվածում միության գործունեությունը համակարգում է վարչությունը, որի անդամները ընտրվում են ընդհանուր ժողովում՝ մեկ տարի ժամկետով:
32. Վարչությունը պետք է բաղկացած լինի 5, 7 կամ 9 անդամներից , որոնց քանակն ընտրում է ընդհանուր ժողովը:
33. Վարչության անդամ կարող է դառնալ միության ցանկացած անդամ, ով կարող է ընտրվել առավելագույնը երկու տարի անընդմեջ: Մեկ տարի դադարից հետո նա կարող է վերընտրվել:

34. Վարչության պարտականությունն է կազմակերպել միության աշխատանքները, այն է՝
- Հրավիրել և կազմակերպել ընդհանուր ժողովներ:
 - Հարաբերություններ հաստատել այլ միությունների և անձանց հետ:
 - Կազմել հանձնաժողովներ (մշակութային, գեղարվեստական, կրթական, մարզական և այլն):
35. Վարչության որևէ անդամի պարբերաբար բացակայության կամ երկրում չգտնվելու պայմաններում վարչությունն իրավունք ունի ամբողջացնելու իր կազմը՝ վարչության անդամների համաձայնությամբ:
36. Վարչության անդամների կեսից ավելիի բացակայության դեպքում վարչությունը լուծարվում է, և հրավիրվում է արտահերթ ժողով՝ նոր վարչություն ընտրելու համար:
37. Վարչությունն իր անդամներից ընտրում է ատենապետ, քարտուղար, գանձապահ, հաշվապահ, գույքապահ, խորհրդակալաններ:
38. Ատենապետի պարտականություններն են.
- վարել վարչության ժողովները:
 - Կազմել վարչության ժողովների օրակարգերը:
 - Վարչության անդամներին հրավիրել ժողովի:
39. Ատենապետն ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավունք չունի. բոլոր որոշումներն ընդունվում են վարչության ժողովի կողմից:
40. Քարտուղարի պարտականություններն են.
- պատրաստել վարչության ժողովների արձանագրությունները:
 - Պահել վարչության արխիվները:
 - Գրել և ուղարկել ժողովի հրավերներ և նամակներ:
41. Գանձապահի պարտականություններն են.
- Գանձապահն իրավունք ունի իր մոտ պահել առավելագույնը 50.000դր. կանխիկ գումար:
 - Գանձապահը պարտավոր է ամսական հաշվետվություն ներկայացնել վարչության ժողովին և տարեկան հաշվետվություն ընդհանուր ժողովին՝ ֆինանսական գործարքների վերաբերյալ:
 - Միության մոտ գոյացած ցանկացած գումար գանձապահը պարտավոր է անմիջապես փոխանցել միության հաշվեհամարին:

V Ֆինանսական միջոցներ

Միության ֆինանսական միջոցները գոյանում են անդամավճարներից և առանձին անհատների և կազմակերպությունների նվիրատվությունից:

- Միության ունեցվածքը պահվում է բանկում:
- Բանկային գործարքները կատարվում են վարչության երեք անձանց՝ ատենապետ, գանձապահ և քարտուղար, գոնե երկուսի համատեղ ստորագրությամբ:
- Բանկային ցանկացած գործարք պետք է կատարվի վարչության ժողովի որոշմամբ:
- Միության գումարը որևէ ընկերության կամ անձի կողմից շահարկաման կամ օգտագործման ենթակա չէ: